ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №1 (49)

2023 թ. մարտի 16-ին տեղի ունեցավ «Պատմաբանասիրական հանդես»-ի խմբագրական խորհրդի նիստ՝ հարցման ընթացակարգով:

Խմբագրական խորհրդի անդամներին ուղարկվեցին հետևյալ բովանդակությամբ գրություններ.

«Հարգելի պարոն/տիկին ...

«Պատմաբանասիրական հանդես»-ի 2023 թ. № 1-ի բովանդակության հաստատմանը նվիրված խմբագրական խորհրդի նիստն անցկացնում ենք հարցման ընթացակարգով:

Խնդրում ենք գրավոր կամ բանավոր հայտնել Ձեր կարծիքը:

Կից՝ 2 թերթ»:

Հարցմանը գրավոր արձագանքեցին՝ Վ. Տեր-Ղևոնդյանը, Ա. Դոլուխանյանը, Ա. Մելքոնյանը, Ա. Տերյանը, Ա. Տոնապետյանը, Գ. Բարդակչյանը, Ս. Մուրադյանը, Լ. արք. Զեքիյանը, Հ. Հովհաննիսյանը, Լ. Աբրահամյանը, Վ. Կատվալյանը, Վ. Դևրիկյանը, Պ. Ավետիսյանը:

Խմբագրական խորհրդի անդամները դրական կարծիք հայտնեցին ներկայացված նյութերի առնչությամբ, կատարեցին որոշ նկատառումներ: Մասնավորապես՝ Լ. արք. Զեքիյանը, Վ. Կատվալյանը դիտարկումներ հայտնեցին որոշ հոդվածների վերնագրերի վերաբերյալ:

Կատարվեցին շտկումներ. որոշվեց հաստատել 2023 թ. № 1-ի բովանդակությունը:

Գլխավոր խմբագիր,
բանասիրական գիտությունների
դոկտոր Ա. Զաքարյան